ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Ս. Հարությունյանի ելույթը

«Գիտության և տեխնոլոգիաների մերձեցում» գիտաժողովում

(29.04.2016 թ.)

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ

Ուրախ եմ ձեզ ողջունելու «Գիտության և տեխնոլոգիաների մերձեցում» խորագրով գիտաժողովի անցկացման կապակցությամբ:

Հատկանշական է, որ նման թեմայով գիտաժողով է կազմակերպվում Հայաստանում, և ողջունելի է, որ կազմակերպողը ոլորտի առաջատար գիտական կազմակերպություններից է՝ ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում խիստ կարևորվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումները: Բազմաթիվ ընկերություններով և միջազգային որակի մասնագետներով տեղեկատվական և թվային տեխնոլոգիաների բնագավառը հանդիսանում է Հայաստանի արդյունաբերության բարձր հավելյալ արժեք ստեղծող և ամենաարագ զարգացող ճյուղերից մեկը:

Հենց դա է պատճառը, որ ՀՀ կառավարությունը 2000 թվականից տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ճանաչել է տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը:

Տնտեսության, արտադրության, հասարակության զարգացման, ինչպես նաև անձի կյանքում հարմարավետության մակարդակի բարձրացման վրա իր ազդեցության մասշտաբներով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներն շահեկանորեն առանձնանում են:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներով պայմանավորված գործառույթներն ակտիվորեն ազդում են նաև երկրի անվտանգության մակարդակի բարձրացման, ինչպես նաև քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բաղադրիչների վրա: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունն

էականորեն կախված է տեղեկատվական անվտանգության մակարդակից, և գիտատեխնիկական առաջընթացին համընթաց այդ կախվածությունն օրեցօր մեծանում է:

Զուր չէ, որ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 54 որոշմամբ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները սահմանվել են որպես Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2019 թվականների գերակայություններից մեկը:

Այս սկզբունքից ելնելով էլ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն խիստ կարևորում է ոլորտի համակարգաստեղծ նշանակությունը և պետական բյուջեի սահմաններում իր աջակցությունն է ցուցաբերում ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը:

Ընդհանրապես, նմանատիպ միջոցառումները միտված են գիտության և արդյունաբերության փոխշահավետ համագործակցությունը խրախուսելուն և մասնագիտական բազմապրոֆիլ հարթակ ստեղծելուն: Դրանք հնարավորություն են տալիս տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի գիտաշխատողներին ներկայացնել իրենց կողմից իրականացվող և կիրառական հետաքրքրություն ներկայացնող հետազոտությունների արդյունքները, ՏՏ ոլորտի արդյունաբերության և պետական կառույցների ներկայացուցիչներին ներկայացնել իրենց գործունեությանն առնչվող խնդիրները: Եվ մենք այստեղ ենք, որպեսզի լսենք այդ խնդիրները, դրանց լուծմանն ուղղված ձեր մոտեցումները, առաջարկությունները:

Մեր խնդիրն է նաև աջակցել նրան, որ Հայաստանի երիտասարդները և նրանց միավորող ընկերությունները զբաղեցնեն ամենաառաջավոր դիրքերը համաշխարհային շուկայում: Վստահ եմ, որ այս բնագավառի երիտասարդ մասնագետները երբեք չեն բախվի աշխատանքային զբաղվածության խնդրին: Շատ կարևոր է, որ ՏՏ ոլորտի ընկերությունները մշտապես ներդրումներ կատարեն իրենց մասնագետների որակավորումը բարձրացնելու՝ նրանց վերապատրաստելու նպատակով:

Մենք կարևորում ենք այս գիտաժողովը նաև նրանով, որ այն պետք է խթան հանդիսանա տեղեկատվական տեխնոլոգիաների գիտական և արդյունաբերական

ոլորտների համագործակցության համար: Ակնկալվում է, որ գիտաժողովի արդյունքում տեղեկատվական ինդուստրիայի և ոլորտի գիտական կառույցների միջև կակտիվանա փոխհամագործակցությունը, էականորեն կավելանան իրականացվող համատեղ նախագծերի քանակը:

Եթե այլ երկրներ ձգտում են արդյունահանել իրենց ընդերքի հարստությունը, ապա մենք ստիպված ենք պեղել մեր տաղանդները, ապավինել մեր ուղեղներին: Հայաստանի բարեկեցությունը մենք պետք է կառուցենք ստեղծագործական աշխատանքով, քանի որ օգտակար հանածոների պաշարները մի օր վերջանում են, մինչդեռ մարդու ստեղծագործական ունակությունները գործնականում ուղղակի անսահմանափակ են:

Հարգելի մասնակիցներ, մեկ անգամ ևս ողջունում եմ բոլորիս գիտաժողովի բացման կապակցությամբ և մաղթում արդյունավետ և հաճելի աշխատանքային օրեր: